

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Լոռու մարզպետին կից երիտասարդական խորհրդի նիստի

11. 11.2014թ. քաղաք Վանաձոր

Նիստը վարում էր խորհրդի նախագահ, Լոռու մարզպետ Արթուր Նալբանդյանը, նիստին մասնակցում էին երիտասարդական խորհրդի 26 անդամներից 18-ը, ներկա էին ԶԼՄ ներկայացուցիչներ:

Օրակարգում ընդգրկված էր երկու հարց.

1. Քննարկումներ համայնքներում երիտասարդական խորհուրդներ ստեղծելու և երիտասարդական կենտրոններ բացելու մասին:
2. Քննարկումներ և առաջարկներ Հայաստանի 2015թ. երիտասարդական մայրաքաղաք Ստեփանավանի բացման միջոցառման և հետագա ծրագրերի շուրջ:

Նիստի օրակարգը հաստատելուց հետո, խորհրդի անդամները, ինչպես որ հանձնարարվել էր նախորդ նիստի ավարտին, ներկայացրեցին համայնքներում երիտասարդների կողմից վեր բարձրացված խնդիրները:

Այլվերդու պետական հատվածի ներկայացուցիչ Արթուր Վարսյանը և Սպիտակի ոչ պետական հատվածի ներկայացուցիչ Գրետա Բաղրամյանը առաջ քաշեցին համայնքներում երիտասարդական խորհուրդներ ստեղծելու և գործող երիտասարդական կենտրոններ ունենալու հարցը, որտեղ կարող են հավաքվել տարածաշրջանի ակտիվ երիտասարդները, կազմակերպել միջոցառումներ, կյուր-սեղաններ, սեմինարներ, մշակել և իրականացնել համայնքների երիտասարդական քաղաքականությունը, բարձրաձայնել երիտասարդներին հուզող հիմնախնդիրները, ինչպես նաև ներկայացնել իրենց հարցերն ու առաջարկները ՀՀ Լոռու մարզպետին կից երիտասարդական խորհրդում՝ ներկայացուցչի միջոցով: Այլ համայնքների ներկայացուցիչները ևս կարևորեցին համայնքներում երիտասարդական խորհուրդներ ունենալու կարևորությունը: Խորհրդի քարտուղար Նազելի Ավագյանը տեղեկացրեց, որ Ստեփանավանում արդեն իսկ ձևավորվել է երիտասարդական խորհուրդ, որն ակտիվ գործունեություն է ծավալում և ունեցել է իր մեծ ներդրումը Ստեփանավանի՝ 2015թ. Հայաստանի երիտասարդական մայրաքաղաք ճանաչվելու հարցում: Ա. Նալբանդյանն այս առումով կարևորեց ուսանելի փորձի փոխանակումը՝ նշելով որ ընդօրինակելի կարող է դառնալ նաև Վանաձորը, որը հանդիսանալով մարզկենտրոն, նմանատիպ աշխատանքներ իրականացնելու բավականին լայն հնարավորություններ ու փորձ ունի: Վանաձորի քաղաքապետի տեղակալ Նորիկ Սարգսյանը պատրաստակամություն հայտնեց Վանաձորի քաղաքապետարանում կենտրոնի գործունեության համար տարածք տրամադրել:

Որոշվեց՝

Համայնքներում ստեղծել համայնքային կամ տարածաշրջանային երիտասարդական խորհուրդներ՝ *ներառելով նաև գյուղական համայնքները?*:

Հանձնարարվեց՝

- Մեկամսյա ժամկետում, ձևավորել երիտասարդական խորհուրդների նախնական կազմը, կազմավորել աշխատանքային խմբեր՝ ընդգրկելով բացառապես բանիմաց, ակտիվ, նախաձեռնող երիտասարդների՝ անկախ կուսակցական պատկանելությունից, քաղաքական հայացքներից, դիրքորոշումից և այլն:
- Մինչև հաջորդ նիստը նախատեսել համայնքներում երիտասարդական կենտրոնների գործունեության վայրերը, կատարել նախնական գույքագրում՝ այդ մասին ներկայացնելով տեղեկատվություն մարզպետին:

Օրակարգի երկրորդ հարցի քննարկաման ընթացքում հնչեցին առաջարկություններ՝ Հայաստանի 2015թ. երիտասարդական մայրաքաղաք Ստեփանավանի բացման միջոցառման և հետագա ծրագրերի շուրջ: Լոռու մարզպետը նշեց, որ երիտասարդական մայրաքաղաքի միջոցառումներին մարզը պետք է ընդգրկվի իր մշակութային, սպորտային ամբողջ ներուժով և 2015թ.-ի ընթացքում լավագույնս ներկայացնի Ստեփանավանն ու Լոռու մարզը ամբողջ Հայաստանում և Հայաստանից դուրս, քանզի Ստեփանավանի հաղթանակը նաև Լոռու մարզի հաղթանակն է: Մարզպետին կից երիտասարդական խորհրդի Ստեփանավանի ներկայացուցիչները ներկայացրեցին <<Երիտասարդական մայրաքաղաք>> ծրագրի շրջանակներում՝ իրենց կողմից արդեն իսկ նախատեսված միջոցառումները.

- Քաղաքային նշանակության ծրագիր - <<Պահանջատեր երիտասարդություն>> խորագրով Յեղասպանության 100-ամյակին նվիրված միջոցառումներ,
- Մարզային նշանակության ծրագիր - <<Ազգային խաղերի տարածումը Լոռու մարզում>> ազգային խաղերի մրցաշարեր Լոռի բերդաքաղաքի տարածքում
- Հանրապետական նշանակության ծրագիր - <<Մշակութային բազմազանություն>> խորագրով երգի, պարի, արվեստի գործերի հանրապետական փառատոններ:

Առաջարկվեց՝

2015թ.-ին Ստեփանավանում անցկացնել նաև սպորտային մրացշարեր, բնապահպանական ուղղվածություն ունեցող ծրագրեր, ամառային ճամբարներ:

Հանձնարարվեց՝

Մինչև տարեվերջ ներկայացնել 2015թ.-ի Հայաստանի երիտասարդական մայրաքաղաքի հետ կապված ծրագրային նոր առաջարկներ՝ համատեղ քննարկելու նպատակով, *ինչպես նաև մտածել տեղական երիտասարդական-հասարակական կառույցները հզորացնելու, կամավորներին վերապատրաստելու ուղղությամբ???:*

Որոշվեց՝

Լոռու մարզպետին կից երիտասարդական խորհրդի առաջին արտագնա նիստն անցկացնել Ստեփանավանում՝ վերջինիս 2015թ.-ի Հայաստանի երիտասարդական մայրաքաղաք ճանաչվելու կապակցությամբ:

Նիստն արձանագրեց Լոռու մարզպետին կից երիտասարդական խորհրդի քարտուղար Նազելի Ավագյանը (+37495405081)

Խորհրդի նախագահ, Լոռու մարզպետ՝

Արթուր Նալբանդյան